

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՆՈՐ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Վերջին երկու տասնամյակներում հրատարակված (գերազանցապես՝ ինքնագիր եղանակով) խեթական սեպագիր տեքստերում վկայված են Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում կամ դրա անմիջական հարևանությամբ տեղադրվող զգալի քանակությամբ տեղանուններ, որոնք առայժմ տեղ չեն գտել հայագիտական հրատարակություններում: Որոշ քանակությամբ տեղանուններ են պարունակում ավելի վաղ հրատարակված տեքստերը, որոնք ինչ-ինչ պատճառներով վրիպել են մեր մասնագետների ուշադրությունից: Այս տեղանունների ուսումնասիրությունը անշուշտ կնպաստի հայոց պատմության վաղնջական վտյի հարցերի հետազոտությանը: Նկատի ունենալով սույն հանգամանքը, ստորև կներկայացվեն այդ նյութերը՝ համապատասխան բնագրային հղումներով և մոտավոր տեղադրության մասին համառոտ նկատառումներով¹:

1) KUR ^{URU}Amb/para (Ամբ/պարա)

- 1) KUR ^{URU}Am-ba-ra (KBo XVI 20, 6')
- 2) ^{URU}Am-ba-ra (KUB XL 80 ԴԿ 12)*
- 3) ^{URU}Am-pa-ra (KBo XVIII 50 ԴԿ 7,8)

RGTC 6.1, S.13; Ertem, 1973, p.9**.

Տեքստեր.

1) KBo XVI 20 - Առայժմ անհայտ պատկանելության պատմական բնույթի տեքստի բեկոր²:

2) KUB XL 80 - «Դատական պրոցես» պայմանական անվանումը կրող տեքստերից³: Հիշատակվում են Իսուվայի թագուհի Կիլուշխեպան և ունն Ալի-շարրուման (վերջինս, հավանաբար, Իսուվայի արքա Արի-շարրուման է (տես Singer, 1991, p.328):

3) KBo XVIII 50 - Խեթական պաշտոնատար անձի նամակը՝ առաքված արքային⁴. Հիշատակվում է Ամբարա քաղաքից բնակչության տեղահանության մասին: Թվագրվում է Մուվատալլիս II-ի կամ Խաթթու-

սիւի III-ի շրջանով (մ.թ.ա.XIIIդ. առաջին կես) (Hagenbuchner, 1989, S.97):

Տեղադրությունը:

*Ամենայն հավանականությամբ, գտնվել է Իսուվայում, քերես, Եփրատից արևմուտք:

2) ^{URU} A-ri-hu-wa (Արիխուվա)

1) ^{URU} A-ri-hu-u-wa (KBo XVI 42 ՀԿ 9')

2) ^{URU} A-ri-hu-w[a] (KUB XL 90 ՀԿ 14')

RGTC 6.1, S.31; Ertem, 1973, p.14 (անկա է սխալ ^{URU} A-ri?-aš-ḫa ընթերցումը).

Տեքստեր.

1) KBo XVI 42 - Ըստ հրատարակչի⁵, Իսուվայում տիրող իրավիճակը նկարագրող՝ արքային ուղղված խեթական պաշտոնյայի մամակ-գեկույցը, որտեղ, վնասված ենթատեքստում, ի թիվս այլ քաղաքների (ո-րոնցից տես ստորև՝ Ḫatima, Manzana, Mezzari, Šinuwa), հիշատակվում են Արիխուվայի «ավազները»:

2) KUB XL 90 - «Դատական պրոցես» անվանումը կրող տեքստե-րից⁶, որտեղ ունի ^{ma} IŠTAR-ի-ն-ն ցերեկայացում է Արիխուվա քաղաքում ինչ-որ մեկի կատարած սև մոգության գործողությունը, որը «Ալիշարու-մայի կնոջ»⁷ մահվան պատճառ է դիտվել:

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում գրեթե հաստատ է:

3) ^{URU} Ari-waš-šu-hi[?](Արիվասսուխի)

^{URU} A-ri-wa-aš-šu-hi[?] (IBoT II 131 ԴԿ 13)

RGTC 6.1, S.37.

Տեքստ.

*IBoT II 131 - Տարբեր բնակավայրերում Պիրվա աստծո պաշ-տամունքի կենտրոնների գործունեության վերակազմավորմանը նվիր-ված տեքստ է⁸: Ասվում է, որ մախկիմում Իսուվայի արքան մատուցում-ներ էր կատարում Տիվալիյա քաղաքի ^{IZEN} ḫarpaš կոչվող տոնակատա-րության առթիվ, սակայն այժմ մա դադարել է կատարել իր պարտակա-նությունները:

Տեղադրությունը:

*Իսուվայում տեղադրելու միակ կովանը այս երկրի արքայի պաշ-տամունքային գործունեությունն է նշված քաղաքի առնչությամբ: IBoT II

131-ում հիշատակվող մյուս բնակավայրերը նույնպես առայժմ չեն տեղադրվում (Šaššuna, Ahla, Gaparsatkan, Hamiyara, Hapušna, Ikkuna, Pulantarišša, Gapiliwanta, Hazusra, Himuwa, Ištuna-x, Gak-x-na, Ša-x-ha քաղաքները և Lihša լեռը): Սրանցից միայն umuwa-ն է համեմատաբար լավ վկայված այլ տեքստերում, սակայն բացի վերինեփրատյան գոտու հետ առնչակցությունից, կոնկրետ տեղադրման համար կովան չկա: Պիրվա աստծո պաշտամունքը լայնորեն տարածված էր Խեթական պետությունում դեռ Հին քազավորության վտյից (մ.թ.ա.XVII-XVIդդ.) և դրա պաշտամունքի կենտրոնները գտնվում էին Փոքր Ասիայի տարբեր շրջաններում⁹, այսինքն, վերոհիշյալ բնակավայրերը փնտրել միայն Իսուվայում արդարացված չի լինի: Այնուամենայնիվ, Իսուվայում տեղադրման օգտին կարող է վկայել այն փաստը, որ Արիվաստիսին հիշատակվում է Տիվալիյա քաղաքի և Իսուվայի արքայի հետ միևնույն ենթատեքստում:

- 4) ^{URU}Artašušša (Արտասուսա)
^{URU}Ar-ta-šu-uš-ša (KUB LVI 40 ՀՎ IV 19')

RGTC 6.1, S.13.

Տեքստ.

*KUB LVI 40-ը¹⁰ պատկանում է խեթական սեպագիր կորպուսում լավ վկայված՝ ծիսական ինվենտարը ներկայացնող տեքստերի շարքին¹¹: Հիշատակվում են Իսուվայի (և այլ շրջանների?) քաղաքների աստվածներին տրվող մատուցումները:

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ չէ:

- 5) ^{URU}Haršalaša/i (Խարսալասա/ի)
^{URU}Har-ša-la-aš-ši (KBo II 1 II 32)
^[URU]Ha[r-ša-la-ša-an (KUB XLIX 11 II 4')

RGTC 6.1, S.32; Ertem, 1973, p.43.

Տեքստեր.

1) KBo II 1 - Ինվենտարային տեքստ, որտեղ հիշատակվում է *huwaši* կոչվող սրբավայրում պահվող ^{URU}Haršalašši քաղաքի Ամպրոսի աստծո արձանը¹²:

2) KUB XLIX 11 - Գուշակային տեքստ, որի նպատակն է պարզել Ազգիի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվելիք) արշավանքի հնարավոր ընթացքը¹³:

Տեղադրությունը:

*Չմայած երկու քաղաքների անվանումները գրեթե համընկնում են, սակայն դժվար է վստահաբար ընդունել դրանց նույնությունը: Համեմայնդեալս, KUB XLIX 11-ում հիշատակվող քաղաքը գտնվել է Հայաստայի Ուրա քաղաքի շրջակայքում կամ դրան հարող խեթական տարածքում:

6) ^{URU}Hatima (Խաթիմա)

^{URU}H_a-a-ti-ma (KBo XVI 42 ՀԿ 18')

^{URU}H_a-a-[ti-ma] (KBo XVI 42 ՀԿ 12')

[^{URU}H_a-a-]ti-ma (KBo XVI 42 ՀԿ 28')

RGTC 6.1, S.101; Ertem, 1973, p.45.

Տեքստ.

*KBo XVI 42 - Տես վերը՝ Ariḫwa.1.

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ է:

7) ^{URU}Kardušša (Կարդուսսա)

^{URU}Kar-du-us-sa (KUB LVI 40 ՀԿ IV 17')

*RGTC 6.2, S.68.

Տեքստ.

*Տես վերը՝ Artašušša.

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ է:

8) ^{URU}Kuwarpiša (Կուվարպիսա)

^{URU}Ku-wa-ar-pi-ša (IBoT II 129 ԳԿ 10)

*RGTC 6.1, S.233 (Իսուվայում); Ertem, 1973, p.83 (նշված է որպես

^{URU}Kuwarpišaiawa).

Տեքստ.

*Գուշակային հարցման տեքստ է¹⁴, որտեղ ներկայացված են Խաթթիի տարբեր բնակավայրերում գտնվող աստվածների տաճարների տոնակատարությունների ժամանակ մատուցվող մվիրատվությունների հարցում մախկինում մկատված թերացումների պատճառները: Հայտնվում է այն մասին, որ մախկինում աստծուն մատուցումներ էին կատարում Իսուվայի Կուվարպիսա քաղաքի բնակիչները, սակայն այժմ նրանք թերացել են և այդ պարտականությունը իր վրա է վերցրել Իսու-

վայի արքան: Այս տեղեկությունը թույլ է տալիս Կուվարպիսան վստահորեն համարելու Իսուվայի քաղաք:

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ է:

- 9) ^{URU}Litta (Լիտաա)
^{URU}Li-it-ta

(KUB XXVI 62 ՀԿ IV(?) 35')

RGTC 6.1, S.249; Ertem, 1973, p.87.

Տեքստ.

*Խեթական տեղության հյուսիս-արևելյան շրջաններից (կասկերի երկիր) և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների ցուցակ¹⁵: Տեղանվան սկզբում a-e/i հերթագայությունը լուրջ խոչնդոտ չէ, քանի որ ցուցակում Էրիսիտային (^{URU}Erhita = ^{URU}Arhita) մախտրում է Տեմիյա քաղաքը, որը, թերևս, մույնն է, ինչ այլ տեքստերից հայտնի ^{URU}Timmiya-ն (Տիմմիյա, Ժաման. *Ջիմիկ* Երզնկայից քիչ հարավ-արևելք)¹⁶, որը պիտի գտնվեր Պախիսուվայի (KUR ^{URU}Pahhuwa) և Արիսիտայի (^{URU}Arhita) հարևանությամբ¹⁷: Պայմանագրի տեքստի՝ մեզ հետաքրքրող հատվածը, որ կրկնակի տողամջատիչով բաժանված է մախտրոյ մասից, ներկայացնում է հինգ տեղանուններ հետևյալ հաջորդականությամբ՝ ^{URU}Ia-x-[.....], ^{URU}Sa-a-la, ^{URU}E-er-hi-ta, ^{URU}Li-it-ta, ^{URU}Te-mi-ia:

Տեղադրությունը:

*Ըստ ենթատեքստի՝ Հայաստյում կամ դրա հարևանությամբ:

- 10) ^{URU}Manzana (Մանցանա)

^{URU}Ma-an-za-na (KBo XVI 42 ԴԿ 16', 18', 19', 21', 22')

RGTC 6.1, S.260; Ertem, 1973, p.91.

Տեքստ.

*Տես վերը՝ Arihuwa.1.

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ է:

- 11) ^{URU}Mezzari (Մեցգարի)

^{URU}Me-ez-za-ri

(KBo XVI 42 ՀԿ 14')

^{URU}Me-ez-z[a-ri]

(KBo XVI 42 ՀԿ 9')

RGTC 6.1, S.274 (= Mizri); Այս սխալ համադրության համար հիմք է ծառայել այն, որ խեթական տեքստերում Եզիպտոսի անունը գրվում է նույն կերպ:

Տեքստ.

*KBo XVI 42 - տես վերը՝ Ariḫwa.1.

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ է¹⁸:

12) ^{HUR SAG}Pupara (Պուպարա [լեռնանուն])

^{HUR SAG}Pu-u-pa-ra-a-aš (KUB XLVI 22 + KUB XLI 34 I 36')

^{HUR SAG}Pu-u-pa-ra-an (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 15)

[^{HUR SAG}Pu]-u-pa-a-ra-an (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 2)

^{HUR SAG}Pu-pa-r[a] (KUB LVI 40 ՀԿ IV 9', 10')

^{HUR SAG}Pu-u-[pa-ra-...] (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 29)

^{HUR SAG}P[u-u-pa-ra-...] (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 25)

RGTC 6.2, S.127f.

Տեքստ.

1) KUB XLVI 22 + KUB XLI 34 - Ծիսական ինվենտարը ներկայացնող տեքստերից, հար և նման KUB LVI 40-ին (տես վերը՝ Artašušša)¹⁹:

2) KUB LVI 40 – տես վերը՝ Artašušša.

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ չէ:

13) ^{HURSAG}Šaliti (Մալիտի[լեռնանուն])

^{HURSAG}Ša-li-ti (KBo IV 4 II 78)

RGTC 6.1, S.335.

Տեքստ.

KBo IV 4 - Մուրսիլիս II-ի «Տարեգրությունները»²⁰:

Տեղադրությունը:

Ռեֆահիեի հովտում՝ Երզնկայից քիչ հյուսիս-արևմուտք (ASVOA

4.3):

*Հայաստաի արևմուտքում կամ հարևանությամբ:

14) ^{URU}Šinuwa (Սինուվա)

^{URU}Ši-nu-wa (KBo XVI 42 ՀԿ 6')

^{URU}Ši-i-nu-wa (KBo IV 13 I 45')

RGTC 6.1, S.358; Ertem, 1973, p.125.

Տեքստեր.

1) KBo XVI 42 - տես վերը՝ Ariḫuwa.1:

2) KBo IV 13 - AN.TAH.ŠUM կոչվող ամենամյա զարմանային տոնակատարությանը մվիրված տեքստ²¹: Սինուվայի աստվածների (DINGIR^{MEŠ} URU^Š Sinuwa) համար խեթական արքան 1 զատ է զոհաբերում (հիշատակվում է Խաարա քաղաքից անմիջապես հետո):

Տեղադրությունը:

Է.Լարոշը չէր բացատում մեկ այլ՝ ^{URU}Sinuwanda քաղաքի հետ մոյնացման հնարավորությունը (Laroche, 1961, p.60): Վերջինս մասնագետներն առաջարկում են փնտրել Կիլիկյան Տավրոսի հյուսիսում՝ ժաման. *Մինանտը* բնակավայրի տեղում, Իվրիզ քաղաքի մոտ (RGTC 6.1, S.358f.):

*Տեղադրությունը Խուվայում գրեթե հսաակ է:

15) ^{URU}Tah(ha)nišara (Տախ(խա)նիսարա)

^{URU}Tah-ha-ni-ša-ra (KUB XLIX 11 ՀԿ III 7)

^{URU}Tah-ni-ša-ra (KUB XLIX 11 ԴԿ II 20')

RGTC 6.1, S.151.

Տեքստ.

*KUB XLIX 11 – տես վերը՝ Ḫaršalaša.2.

Տեղադրությունը:

*Ամենայն հավանականությամբ, Հայաստանից արևմուտք՝ Խաթթիի տարածքում:

16) ^{ḪURSAG}D/Tarutena (Դ/Տարուտենա [լեռնամուն])

^{UR}SAG Da-ar-ú?-te-na (IBoT I 33, 45)

RGTC 6.1, S.409; Gonnet, 1968, p.114

*Տեղանվան գրության երկրորդ նշանը Է.Լարոշը հակված էր ընթերցելու kit և վերականգնելու Tarkittena (Laroche, 1958, p.153).

Տեքստ.

*IBoT I 33 - Գուշակային բնության տեքստ, որտեղ ներկայացվում են Կումմախա քաղաքում տեղի ունեցած՝ խեթական արքայի անձի և պետության ապագայի համար կարևոր նշանակություն ունեցող գուշակության արդյունքները²²:

Տեղադրությունը:

Կումմախա-Կամախի մոտակա լեռներից մեկը (Gomnet, 1968, p.114).

*Այս լեռնամվան առաջարկված մոտավոր տեղադրությունը հայկ. Կամախի շրջակայքում մաև արտաքնապես որոշակի նմանությունը հայկ. Թորդան զավատման հետ, նկատի առնելով IBoT I 33-ի համապատասխան ենթատեքստում լեռան ծխա-պաշտամունքային կարևոր դերը, կարող են հիմք ստեղծել աշխատանքային վարկածի առաջադրման համար:

17) ^{URU}Tawatena (Տավատենա)

^{URU}Ta-wa-te-na

(KUB XLIX 11 III 6)

RGTC 6.2, S.167.

Տեքստ.

*KUB XLIX 11 - Տես վերը՝ Haršalaša.2.

Տեղադրությունը:

*Հայասայի Ուրա քաղաքի շրջակայքում:

18) ^{URU}Ut-kuniša[] (Ուտկունիսա)

^{URU}Ut-ku-ni-ša[]

(KUB XLIX 11 III 24)

RGTC 6.1, S.182.

Տեքստ.

*KUB XLIX 11 - Տես վերը՝ Haršalaša.2.

Տեղադրությունը:

*Հայասայի Ուրա քաղաքի շրջակայքում:

19) ^{HUR SAG}Wanzapanda (Վանցապանդա [լեռնանուն])

^{HUR SAG}Wa-an-za-pa-an-da

(KUB LVI 40 ՀԿ III 5')

RGTC 6.1, S.186.

Տեքստ.

*Տես վերը՝ Artašušša

Տեղադրությունը:

*Տեղադրությունը Իսուվայում հստակ չէ:

NEW TOPONYMS IN HITTITE TEXTS

In a number of recently published Hittite cuneiform texts, as well as in some old ones are preserved 19 place-names (15 towns/settlements and 4 mountains) which are not referred to in Armenological literature. These toponyms belong to the area where in the II millennium B.C. were known two states – Hayasa and Isuwa; some of these may lay along the borders of the above-mentioned state-formations.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ԴԿ = Դիմային կողմ, ԴԿ = Դակառակ կողմ: **խեթական տեքստերում հիշատակվող տեղանունների բառարանները: Յուրաքանչյուր տեղանվան տեղագրության վերաբերյալ հեղինակի նկատառումները նշվում են աստղանիշով:

1. Այդ հատուկ անունները պարունակող տեքստերի ամբողջական գիտական հրատարակությունը կգետեվի մեր՝ ուսումնասիրության պրոցեսում գտնվող «Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. II հազարամյակում (ըստ խեթական սեպագիր տեքստերի)» աշխատությունում: Նախկինում հայտնի տեղանունների մոտ վկայությունները բաց են թողնված. դրանց լիակատար ցուցակը տեղ կգտնի հրատարակության պատրաստվող «Հայկական լեռնաշխարհի տեղանունները խեթական տեքստերում» աշխատության մեջ:
2. CTH 211.25. ըստ Ա.Կամմենհուբերի, Աուրսիլիս II-ի «Տարեգրությունների» մասն է կազմում (Kammenhuber, 1970, S.550):
3. CTH 297.11, հատվածական հրատարակությունը՝ den Hout, 1995, S.183
4. CTH 188, հրատ.՝ Hagenbuchner, 1989, Nr.62, S.96ff.
5. CTH 214.13, հատվածական հրատարակությունը՝ Klengel, 1976, S.85f.
6. CTH 295. դրանց մի մասի հրատարակությունը՝ Werner, 1967: Վերջինիս մոտ տեղանունն ընթերցված է ^{URU}A-ti?-aš-ja, սակայն հետագայում ճշգրտվել է (RGTC 6.1, S.37):
7. Կիլուշխեպայի՝ որպես Իսուվայի արքա Արիշարրումայի կինը լինելու մասին տես Güterbock, 1973, p.137ff.; նաև Houwink ten Cate, 1996, p.48, 52f.: Սակայն KUB XL 80-ում որպես «Ալիշարրումայի կնոջ» հիշատակությունը որոշ կասկածների տեղիք է տվել (տես Klengel, 1976, S.88): Կիլուշխեպան Խաթթուսիլի III-ի և Պուդուխեպայի դուստրն էր (Singer, 1991, p.328) կամ Պուդուխեպայի քույրը (den Hout, 1998, p.126): Կիլուշխեպային հիշատակող տեքստերի տեսության համար՝ de Roos, 1987, p.74ff.:
8. CTH 518, մասն.հրատ.՝ Pecchioli-Daddi, 1982, p.18,43; Imparati, 1990, p.168ff.
9. Otten, 1952, S.67.

10. Հրատ.՝ Քոսյան, 2002ա, էջ.315-322. Այս տեքստը նշված չէ է.Լարոշի և Չիկագոյի համալսարանի արևելագիտության ինստիտուտի «Կատալոգներում» (վերջինս՝ ինտերնետային), սակայն բովանդակությամբ և կառուցվածքով համեմատելի է KUB XXVII 68-ին (CTH 673), որը ներկայացնում է պաշտամունքային խոշոր կենտրոն Ներիկում երկրպագվող աստվածություններին մատուցվող ծեսերը (տեքստի մի հատվածի հրատարակությունը տես մեր վերը հղված հոդվածում):
11. Այս տեքստերը է.Լարոշի կատալոգում (Laroche, 1971) ցրված են տարբեր բաժիններում (CTH 501-530): Դրանց մի մասի հրատարակությունը և հետազոտությունը՝ Carter, 1962:
12. CTH 509, հրատ.՝ Hrozny, 1919, S.1ff.; Carter, 1962, p.51ff.
13. CTH 577 (Chicago). տեքստը կգետեղվի մեր՝ հրատարակության պատրաստվող «Նեթական տերությունը և Հայասան մ.թ.ա.XIII դարում» հոդվածում:
14. CTH 574. հատվածական հրատ.՝ Otten-Rüster, 1972, S.106 և Berman, 1982, p.95f.
15. Այս և նմանատիպ տեքստերի մի մասի հրատարակությունը և հետազոտությունը տես von Schuler, 1965, S.134ff; Ատորև հղվող հատվածի գիտական տառադարձումը՝ idem, S.145:
16. ASVOA 4.3.
17. Այս, ինչպես նաև Պախխուվայի հակախեթական ապստամբության ենթատեքստում հիաշատակվող մեծաքանակ տեղանունների տեղադրման հնարավորությունների մասին տես մեր՝ հրատարակության պատրաստվող «Առնուվանդաս I-ը և վերինեփրատյան երկրները («Պախխուվացի Աիտայի ապստամբությունը») մենագրությունը:
18. Անվան զրեւածէի պատճառով, այն սխալմամբ թվարկվում է Me/izri-եգիպտոս գլխաբառի տակ (RGTC.1, S.274):
19. KUB XLI 34 + KUB XVI 22 = CTH 530 (CTH.Supp.):
20. Նեթական արքա Աուրսիլիս II-ի «Տասնամյա» և «Ընդարձակ» տարեգրությունները («Տասնամյա տարեգրություններ» [= CTH 61.I], «Ընդարձակ տարեգրություններ» [= CTH 61.II] զետեղված են հետևյալ հրատարակություններում՝ Götze, 1933, S.14ff: CTH 61.I-ի վերահրատարակությունը՝ մոր կցաբեկորների ներառմամբ՝ Grelais, 1988, p.17ff: Կայագիտական հրատարակություններում տեքստի առանձին հատվածների գիտական տառադարձումը՝ Хачатрян, 1971, с.152-158, թարգմանությունը՝ Манандян, 1956, с.89-90, 92, 96, 98; .Խաչատրյան, 1998, էջ.69-77:
21. CTH 625, հրատ.՝ Götze, 1930, S.20ff.; Bossert, 1946, S.21f.; Cornelius, 1955, S.54ff.; idem, 1958, S.227ff (բոլորը հատվածաբար):
22. Ամբողջական հրատարակությունը՝ Laroche, 1958, p.252ff: նաև՝ Քոսյան, 2002բ, էջ 234 (հատվածաբար):

Խաչատրյան Վ.

1971. Восточные провинции Хеттской империи, Ер.

1998. Հայաստանը մ.թ.ա.XV-VII դարերում, Եր.

Զոսյան Ա,

2002ա. Իսուվայի (Ծոփք) կրոնական կենտրոնները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» XXI, Եր., էջ.315-331.

2002բ. Անի-Կամախը խեթական դարաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», N.3, էջ.225-241.

Манандян Я.

1956. О некоторых спорных проблемах истории древней Армении, Ер.
(=Я.Манандян, "Труды" т.5, Ер., сс.437-614).

Berman H.

1982. Some Hittite Oracle Fragments, "Journal of Cuneiform Studies" 34/1-2, p.94-126.

Bossert H.Th.

1946. Asia, Ankara.

Carter Ch.W.

1962. Hittite Cult-Inventories, Chicago (Diss.).

Cornelius Fr.

1955. Hethitische Reisewege, „Revue hittite et asianique“ 13, fasc.57, S.49-62.

1958. Geographie des Hethiterreiches, "Orientalia" 27, S.225-251, 373-398.

de Roos J.

1987. Who was Kilišhepa?, „Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch Geselschap „Ex Oriente Lux“ (Leiden)" 29, p.74-83.

den Hout Th.P.J.

1995. Der Ulmitešub-Vertrag: Eine prosopographische Untersuchung, Wiesbaden
(= „Studien zu den Boğazköy-Texten " 38).

1998. The Purity of Kingship, Leiden - Boston - КФІп.

Ertem H.

1973. Boğazköy metinlerinde geçen coğrafya adları dizini, Ankara.

Gonnet H.

1968. Les montagnes d'Asie Mineure d'apres les textes hittites, „Revue hittite

et asianique " 26, fasc.83, p.93-170.

Götze A.

1930. Bemerkungen zu dem hethitischen Text AO 9608 des Louvre, "Revue hittite et asianique" 1, S.18-30.

1933. Die Annalen des Muršiliš, Leipzig (= „Mitteilungen der Vorderasiatisch-Ägyptischen Gesellschaft " 38).

Grelois J.-P.

1988. Les Annals Decennales de Mursili II (CTH 61.1), „Hethitica“ IX, p.17-145.

Güterbock H.G.

1973. Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe, „Journal of Near Eastern Studies“ 32, p.135-147.

Hagenbuchner A.

1989. Die Korrespondenz der Hethiter, Wiesbaden (= „Studien zu den Boğazköy-Texten“ 15-16).

Houwink ten Cate Ph.H.J.

1996. The Dynastic Marriages of the Period between ca.1258 and 1244B.C., „AoF“, 1996/1, p.40-75.

Hrozny B.

1919. Hethitische Keilschrifttexte aus Boğazköi in Umschrift, Übersetzung und Kommentar, Leipzig (= „Boğazköi Studien“ 3).

Imparati F.

1990. Obligations et manquements culturels envers la divinite Pirwa, „Orientalia“ 59, p.166-187.

Kammenhuber A.

1970. Keilschrifttexte aus Boğazköi (KBo XVI), „Orientalia“ 39, fasc.4, S.547-567.

Klengel H.

1976. Nochmals zu Isuwa, „Oriens Antiquus“ 15, S.85-89.

Laroche E.

1958. Lécanomancie Hittite, „Revue d'Assyriologie et d'Archéologie Orientale“ 52, p.150-162.

1961. Etudes de toponymie anatolienne, „Revue hittite et asianique“ 69, p.57-98.

Otten H. – Rüster Chr.

1972. Textanschlüsse und Dublikate von Boğazköi -Tafeln (1-10), „Zeitschrift

für Assyriologie“ 72, S.102-108.

Pecchioli-Daddi F.

1982. Mestieri, professioni e dignita nell'Anatolia ittita (= *Incunabula graeca* 79), Roma.

Schuler von E.

1965. Die Kaškäer. ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin.

Singer I.

1991. The Title „Great Princess“ in the Hittite Empire, „Ugarit-Forschungen“ 23, p.327-338.

Werner R.

1967. Hethitische Gerichtsprotokolle, Wiesbaden (= „Studien zu den Boğhazköi - Texten“ 4).

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ASVOA.4.3 - Atlante storico del Vicino Oriente antico, Fascicolo 4.3, Anatolia: l'Impero Hittita, Pavia, 1986 (M.Forlanini, M.Marazzi).

CTH - E.Laroche, Catalogue des textes hittites, Paris.

CTH.Suppl. - Catalogue des textes hittites. Supplement 1, „Revue hittite et asianique“ 30, p.94-133.

IBoT - Istanbul Arkeoloji Müselerinde bulunan Boğhazköi Tabletlerinden Seçme Metinler (Istanbul).

KBo - Keilschrifttexte aus Boğhazköi (Leipzig und Berlin), 1916ff.

KUB - Keilschrifturkunden aus Boğhazköi (Berlin).

RGTC - Répertoire Gnographique des Textes Cuneiformes (Wiesbaden).

RGTC.6.1 - J.F. del Monte und J.Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978.

RGTC.6.2 - J.F. del Monte, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1992.